նալ բարեսիրտ Աւօյին, որի պատմութիւններն իր որսորդական կեանքից այնքան հետաքրքրում էին, այնքան ոգեւորում էին ինձ...

Բայց որքա՜ն մեծ եղաւ իմ ուրախութիւնը, երբ ճանապարհին Սագօն դարձաւ ինձ այս խօսքերով.

— Գիտե՞ս, ուր ենք գնում, Ֆարհատ:

— Ինձ ոչինչ չէ ասել Կարօն, — պատասխանեցի ես:

— Դու յիշո՞ւմ ես որսորդ Աւօյին, այն լուռ, միշտ խոժոռ մարդուն, որ մի ժամանակ ձեր դրացին էր. մենք գնում ենք նրա տունը: Տե՛ս, այն սարերի մէջն է բնակւում նա:

Սագօն ձեռքը մեկնեց դէպի արեւմուտք, կարծես, ես գիշերային խաւարի մէջ կարող էի տեսնել նրա ցոյց տոած տեղը:

— Յիշում եմ, — պատասխանեցի ես մի առանձին բաւականութեամբ: — Հիմա բոլորովին ծերացած կը լինի Աւօն, տասներկու տարի է, որ չեմ տեսել նրան:

— Հին վիշապները շուտ չեն պառաւում: Դու կը տեսնես նրան շատ քիչ փոխոած, — ասաց Սագօն իր սովորական հեգնական եղանակով: — Բայց մի՛տդ է, Ֆարհատ, Աւօյի որդեգիրը՝ Յասոն, որին մենք դպրոցում կոչում էինք «էշի փալան»:

— Որին մեր վարժապետը կոչում էր «սատկածէ, — աւելացրի ես, — որը ոչինչ չէր սովորում եւ շուտ յոգնում էր, երբ ման գալու էինք գնում. աշակերտները շատ անգամ ստիպոած էին շալակել նրան եւ ետ բերել դաշտից:

— Հէնց նա, գտար. բայց հիմա որ տեսնես, չես ճանաչի, այնքան հաստացել է, սարի արջ է դարձել. երեւի, վրայ եկաւ լեռնային օդը:

— Ի՞նչ է շինում:

— Գրողը տանի նրան, հիմա տուն ու տեղի տէր է դարձել, վար է վարում, ցանք է անում. կնիկ ունի. ամէն տարի երկու հատ ծնւում են. տունը լիքն է երեխաներով. ճանճերի նման վժվժում են:

— Էլի այնպէս մաղձո՞տ է, որպէս առաջ:

— Հիմա օրինաւոր մարդ է դարձել. իստակ հոգի է տալիս, երբ նրա տունն ես մտնում. ուզում է՝ ինչ որ ունէ, ինչ որ չունէ, քեզ ուտացնել ու այնպէս ճանապարհ դնէ:

— Ուրեմն հարո՞ւստ է:

— Գութան ունի, անասուններ ունի. հէնց ես ու դուն մնացինք առանց ոչնչի, Ֆարհատ: